4. Յերկաթուղու գծի փոխանցական սլաքները պետք է պայթեցնել 400 գրամ լիցքով, իսկ խաչմերուկները 800 գրամ և ցըռվ (նկ. 20):



Նկ. 20.  
Փոխանցական սլաքի պայթեցումը:

5. Ջրամբարների աշտարակները, ջրհորները և ծորակները, ջրատար խողովակը պետք է վոչնչացնել մեկ կիլոգրամանոց լիցքով ամեն մի խորանարդ մետրին, լիցքը տեղավորելով խողովակի մեջտեղը, իսկ բետոնի խողովակները պայթեցնելիս, լիցքը պետք է յերկու անգամ ավելացնել:

6. Շոգեքարշերը պետք է փչացնել 1200 գրամ լիցքով, դասավորելով այն չոր գոլորշիանոցի մոտ, կաթսայի պատի վրա և վառելատեղում, պատի մոտ:

7. Ցեֆե շրջադարձ բոլորակ և շոգեքարշ կա, ապա շոգեքարշը պետք է կանգնեցնել բոլորակի վրա և հետո պայթեցնել բոլորակը:


8. Արհեստանոցներում պետք է փչացնել կարեոր դազգահները:

9. Յերկաթ պայթեցնելու ժամանակ պետք է լիցքից հեռու լինել, մինչև 500 մետր և թաքնվել, վորպեսզի պայթումից ստացված բեկորները չվնասեն:

### ՍԱՐՈՒՅԻ ՊԱՅԹԵՑՈՒՄԸ

Լիցքը սառուցի տակ դնելու համար սառուցի մեջ մի անց ենք բացում, կտրելով վորեն գործիքով այնքան, վոր լիցքն անցնի սառուցի տակը: Լիցքի համար կարող են ծառայել կարտոններ, արկղներ, վորոնք պետք են սև ձյութով պատճեննեն: Կարելի է գործադրել թնդանոթի պարկումները և վառութիւնը:

Լիցքն իջեցվում է ջրի մեջ պարտնով և մի ծանրությունուն կապած, կամ կատվում է մի յերկար ձողից (նկ. 21):



Նկ. 21.  
Լիցքի իջեցումը սառուցի տակ. Ա—պարանով, Բ—ձողով:


Լիցքի մեծությունը կախված է սառուցի հաստությունից և սառուցի տակին լիցքի գտնվելու խորությունից. որինակ՝ սառուցի հաստությունն է 0,2 մետր, լիցքի խորությունն է սառուցից 1,5—1,8 կամ 2 մետր, դրան համապատասխան վերցվում են 2,5 և 8 կիլոգրամանոց լիցքեր, վառողից պատրաստած, իսկ Փ. Պ. Ն. պետք է վերցնել լիցքը անզամ պակաս:

Պայթումից հետո ստացվում է 7—8 մետր տրամագծով մի շրջան, վոր ծածկված է լինում ջրով:

### ՔԱՐԵՐԻ ՅԵԼ ԺԱՅՎԵՐԻ ՊԱՅԹԵՑՈՒՄԸ

Քարերը պայթեցնում են արտաքին լիցքով կամ ծակում և մեջը լցնում են Պ. Ն. Յեթե քարի վրա կան ճեղքվածքներ, այդ դեպքում պետք է լիցքը տեղափորել այդ ճեղքվածքներում և ծածկել ճիմով կամ լաթով:

Մեծ քարը 5—10 մետրի վրա շարտելու համար, լիցքը պետք է տեղափորել քարի տակ և պինդ ամրացնել հողով (նկ. 22):




Նկ. 22.

Քարը մի կողմ նետելու:

Քարի մեկ խորանարդ մետրին հարկավոր է յերեք կիլոգրամ պայթուցիկ նույթի վառող. Առանձին քարը արտաքին լիցքով կարելի է պայթեցնել, յեթե նրա ծավալը 15 խորանարդ մետրից ավելի չէ:

Քարն արտաքին լիցքով պայթեցնելու համար, վերցվում է 0,1 խորանարդ մետրին 200 գրամ փշրտող Պ. Ն. Ջրի տակ քարը պայթեցվում է արտաքին լիցքով, և պայթուցիկ նյութը վերցվում է 2 անգամ ավելի պակաս, քան բաց ողում:

Ժայռերը կամ քարերը ծակելու համար միջին հաշվով 0,1 խորանարդ մետր քարին անհրաժեշտ է 15—20 գրամ Փ. Պ. Ն.: Իսկ վառող գործադրելու դեպքում, լիցքը պետք է լիցքը անգամ ավելացնել (նկ. 23):



Նկ. 23.

Առանձին քարի և ժայռի պայթեցնումը,  
լիցքերը տեղափորելով դանաձն  
ծակելում:

### ՈՐԻՆԱԿԵԼԻ ԽՆԴԻՐԻ ՔԱՐԸ ՄԱՆՐ ԿՏՈՐՆԵՐԻ ՊԱՅԹԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Քարի ծավալն է 12 խորանարդ մետր: Լիցքերը պետք է տեղափորել ծակելում: Ծակի փորվածքի խորությունն է 0,8 մետր և քանակը 6: Տոլի լիցքի մոտավոր մեծությունն է յերեքական գլանաձն շաշկա՝  $3 \times 6 = 18$  շաշկա (1350 գր): Փշրտող պայթուցիկ նյութով լցվում է փորվածքի  $\frac{1}{4}$  մասը, իսկ վառողով  $\frac{1}{3}$  մասը:

### ՑՈՒԴԱՍՆԵՐ

Հակառակորդի հետևակի դեմ պետք է գործադրել դաշտային փուզասներ:


1. Ֆուզասները պետք ե թաղել գետնի մեջ մեկ կամ յերկու մետր խորությամբ:

2. Ֆուզասները պետք ե դասավորել շախմատաձև, մեկը մուսից ըստ խորության 20—30 մետրի և ըստ ձակատի 15—20 մետրի վրա:

3. Պետք ե վերցնել վառողի լիցքեր 15—30 կիլոդրամ:

4. Պետք ե հիշել, վոր ֆուզասները գլխավորապես բարոյական ազդեցություն են թողնում և թշնամուն խուճապի լին մատնում:

5. Ֆուզասների դասավորման տեղի վերաբերյալ, պետք ե համաձայնության գալ զորամասի ընդհանուր հրամատարի հետ:



Նկ. 24.

Ա—լիցքի դասավորումը, Բ—քարանիտի հատակագիծը,  
Գ—քարանիտի ծրագծումը:

6. Թշնամուն նավերի դեպի մեզ շարժումը կանգնեցնելու կամ զետից անցնելը խափանելու համար, պետք ե սարքել և գործադրել ստորչյա ֆուզասները. խորասուզվող ծանրոցները

պետք ե լիցքի քաշից 4—5 անգամ ավելի ծանր պատրաստել, այլապես լիցքը չի խորասուզվի: Ստորչյա ֆուզասներ կիրառելու ժամանակ պետք ե գործադրել նաև կեղծ ֆուզասներ՝ չեց, արկղից, տակառներից, իսկ լիցքի փոխարեն պետք ե վերցնել ավաղ կամ հող:

7. Թշնամուն կենդանի ուժերը հարվածելու համար, պետք ե գործադրել քարանիտ, վոր պետք ե դասավորել այնպիսի տեղում և ուղղությամբ, վորտեղից կարող ե թշնամին կուտակված շարժվել. քարանիտի տեղը պետք ե լավ քողարկված լինի, քողարկված պիտի լինեն նաև հաղորդիչները:

Քարանիտը պայմթեցվում ե գլխավորապես ելեկտրականության միջոցով (նկ. 24):

Բացի դաշտային քարանիտից, կարելի լին գործադրել նաև մի այլ տեսակի քարանիտ, վոր մյուս քարանիտներից տարբերվում ե նրանով, վոր լիցքի վրա դրվում և վոչ թե մանր բոնցքաչափ քարեր, այլ մի ամբողջ մեծ քար, հաշվի տանելով լիցքի ուժը: Այդ գեպքում պետք ե վերցնել փշտող պայմթուցիկ նյութ: Պայմթելու ժամանակ այդ քարը դուրս ե թուզում մանր փշրված կտորներով և դիպչելու ժամանակ վնասում ե:

8. Ֆուզասների պայմթեցման համար, ըստ ցանկության, ավելի լավ ե գործադրել ինքնապայթող և քիմիական ֆուզասներ:

## ԽԱՓԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՊԱՏԿԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Պարզեցրած պայմթուցիչ. դրա գործադրելու կանոններն են:

1. Պետք ե լեռ պատել ներքին մասը:

2. Զնդանի վրա դնել սովորական փամփուշտի կենտրոնական խմբան պատիճ:

3. Նորից ներքելի մասն իր տեղը պատել:

4. Խողովակի մեջ դնել արագ այրվող քուղ և միացնել պատիճի հետ, պատիճը տեղավորելով լիցքի մեջ: Պայմթուցիչը պետք ե գործադրել ինքնապայթող ֆուզասների համար, վորպես ծառակույտերում (զավալներում) անսպասելի պայմթեցում առաջնելու միջոց, իսկ պարագան կթելադրի, թե ինչպես ավելի ոգտակար կլինի ոգտագործել առն: Բացի այդ պարզեցրած պայ-

թուցիչից, կարելի նաև գործադրել ձեռքի նոնակներ, տարբերությունը կլինի միայն պայման արագության մեջ: Հետախուզության ժամանակ, յեթե հայտաբերվեն պարզեցրած պայմուցիշներ, բուժքը չպետք ե քաշել, հակառակ դեպքում պայմում կառաջանա:

## ՓՈՂԱԿԱԶԵՎ ՄԻԱՅՈՒՑԻՉ

Գործադրելու կարգը հետեւյալն ե. պետք ե ձգել ձողիկը և դնել միջին դրությամբ, յեթե մինչև վերջը ձգենք կամ բաց թողնենք, կմիացնենք շղթան: Նախ քան գործադրելը, պետք ե ստուգել միջին դրությունը, չի անցկացնում արդյոք ելեկտրոնային դրա համար բավական ե մի ելեմենտ: Այդ գլանաձե միացուցիչը պետք ե գործադրել ծառակուտերում, ֆուզասային թակարդներում, կամուրջների վրա, լարափակոցներում և շավիղներում (կածաններում): Յեթե հայտաբերվում են տրամիսի միացուցիչներ ֆուզասաների հետ միասին, չպետք ե ձեռք տալ թերթին, այլապես, յեթե ձգենք կամ կտրենք, պայմում կառաջանա:

Հաղորդիչները չպետք ե կտրել, կարող են կեղծ լինել, այլ պետք ե գտնել ելեմենտը և առանձնացնել այն, վորից հետո կարելի յե վստահ և անվտանգ կերպով գործել:

## ԳՆԱՅԻՆ ՊԱՅԹՈՒՑԻՉ ՄԻԱՅՈՒՑԻՉ Ա—XII

Այդ պայմուցիչը հաշված ե գնացքներ պայմուցներու համար: Պայմուցիչը բաղկացած ե մի արկղից յերկու հաղորդիչներով, խողովակից, թասակից և յերկու բուլիքներից: Դրանից ոգտվում են հետեւյալ ձևով:

1. Պետք ե ստուգել, թե արդյո՞ք պատկանելիքը չեղոքացրած դրության մեջ ելիքտրահոսանք չի հաղորդում (չհանելով վերին և ներքին բուլիքները), յեթե ելիքտրահոսանք կա, ուրեմն պատկանելիքը սարքին չե:

2. Պետք ե միացնել ելեմենտը, դուրս քաշել ներքին արդիքիչը և թեթև սեղմել, յեթե հոսանք կա, ուրեմն պատկանելիքը սարքին ե. ապա բուլիքը պետք ե դնել իր տեղը:

3. Պետք ե յերկու ելեմենտ և լիցքեր միացնել (չհանելով արգելիչը) և դնել ուելի կամ կոճի (շպալի) տակ:

4. Դուրս հանել վերին բուլիքը. յեթե պատկանելիքը նըստվածք ե տալիս, այդ դեպքում խուփը հատում զսպանուկի շնորհիվ բարձրանում և կպչում ե ուելին կամ շպալին:

5. Դուրս հանել ներքին արգելիչը:

6. Պետք ե քողարկել պատկանելիքն ու լիցքը. առաջին իսկ գնացքից լիցքը կպայմանական պետք ե ժամացուցիչը մեխանիզմ միացնել: յեթե հայտաբերվել ե այդպիսի պատկանելիք, չեղոքացնելու համար պետք ե դնել ներքին արգելիչը (ձեռք չտալով վերինին) և անջատել շղթան:

## ԴԱՆԴԱՂ ԳՈՐԾՈՂ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՅԹՈՒՑԻՉ

Այդ գործիքով կարելի յե հաշվել այնպիս, վոր պայմում առաջանա յերկու շաբաթից մինչև յերեք ամիս ժամանակամիջոցից հետո: Դրա կառուցվածքը կայանում ե նրանում, վոր/թըթվուտն աստիճանաբար մաշեցնում ե մետաղե լարը, վոր պահում ե զսպանակը սեղմված դրությամբ: յերբ լարը մաշվելուց հետո կտրվում ե, իսկույն պայմում ե առաջանում շնորհիվ նրան, վոր զսպանակն ազատվելով, առաջ ե մղում զարկանը և պայմուցնում ե պատիճը: Այդ պայմուցիչը պետք ե գործադրել թշնամու թիկունքում կամուրջներ և շենքեր պայմուցներու համար, վորի հետեւանքն անսպասելի կլինի հակառակորդի համար: Այդ բարուապես և ֆիզիկապես մեծ ազդեցություն կգործի հակառակորդի վրա:

## ՀԱԿԱՅԱՆԿԱՅԻՆ ԱԿԱՆՆԵՐ

Պաշտպանողական ռալոնն ուժեղացնելու համար դրվում են նաև հակառանկային ականներ, վորոնք կասեցնում են հակառակորդի տանկերի առաջշարժում: Ականի պայմուցիչը նյութը լինում ե 2—3 կիլոգրամ, վոր դրվում ե մի արկղի մեջ: Այդ ականի կառուցվածքը հիմնված ե հետեւյալի վրա. տանկի շարժող

թըթրածո ժամավենն այդ արկղի վրալով անցնելիս, նստվածք և առաջ բերում, վորից եկեկարանուանքի միացում և ստացվում, և այնուհետև պատթում և լիցքը, վոր գտնվում և այդ տափակ արկղի մեջ:

Այդ պատրաստի ականները դասավորվում են այնպիսի տեղերում, վորտեղից հավանական և թշնամու տանկերի, զրահապատ մեքենաների շարժումը: Ականները թաղելիս, հաշվում են մի քառակուսի մետրի համար մեկ ական և ավելի:

### ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԽԱՓԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Խափանման ծառայության նպատակն է պաշտպանողական ռայոնով ստեղծել այնպիսի խոչընդոտներ և արգելքներ, վորոնց միջոցով կարելի լինի կասեցնել թշնամու ազատ շարժվելը դեպի մեզ:

Արգելքները պատրաստվում են վոչ միայն թշնամու հետեւակի, այլ և զրահապատ ու մեխանիկական ուժերի շարժումը կասեցնելու համար:

1. Ծառերից արգելանտառ սարքելու ժամանակ, կտրած ծառերը պետք են խճճել փշալարով. չպետք են շատ ծառեր կտրելով զրադիվել, այլ կտրածներն ուժեղացնել ֆուզասներով և փշալարով: Այդ իսկական ֆուզասների հետ միասին պետք են սարքել նաև կեղծ լարեր, հաղորդիչներ և ելեմենտներ:

2. Ճանապարհներում ֆուզասներ թաղելիս, իսկական ֆուզասների հետ միասին պետք են սարքել ավելի շատ կեղծ ֆուզասներ, թաղելով զանազան բանկաներ, հին արկեր, արկղներ և փշացած եկմենտներ, վորոնց վրա թշնամին բավական ժամանակ կկորցնի իսկական ֆուզասները հայտաբերելու համար:

3. Ճանապարհներում ականներ պետք են թաղել այնպիսի տեղերում, վորտեղ դրանց շուրջն անցնելու հարմարություն չկա:

4. Պետք են իմանալ վոչ միայն խափանում սարքելը, այլ և անհրաժեշտ են իմանալ դրան գտնելը:

5. Արգելանտառի հանդիպելիս, պետք են նայել, թե արդյոք ականներ չեն թաղված. արգելանտառը պետք են ձգել վոչ թե ձեռքերով, այլ հաստ պարանով կամ տրոսով (յիրկաթալարի պարանով). ապա մեքենաներով պետք են քաշել և դեպի մի կողմը տանել, վորով կապահովվի անվտանգությունը:

6. Հաղորդիչներ հայտարերելիս, պետք են գտնել ու կտրել ելեմենտները: Անծանոթ պալթուցիչ գտնելու դեպքում, պետք են դիմել ավելի փորձված հրամատարի, վորի ողնությամբ կարելի յի վտանգը վերացնել:

### ԼԵՌՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԴՐՎՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ ՀԵՏԵՎՅԱԼ ԽԱՓԱՆՈՒՄՆԵՐԸ

1. Յեթե ճանապարհն անցնում է ուղղորդ լանջով կամ ժայռի տակով, պետք են կողքի ժայռը կամ հողը, ուղղակի պայտեցնելով, թափել ճանապարհի վրա:

2. Քարակուլտեր սարքել ճանապարհի վրա և ականներ դնել, վորը հակառակորդի համար ավելի սարսափելի կլինի:

3. Լեռնային կածանների (շավիղների) կամ լեռնային ճանապարհների հետքը կորցնելու համար, կարելի յի նաև մի քանի կեղծ շավիղներ ու լեռնային ճանապարհներ սարքել: Դժվար անցնեմելի վայրում անհրաժեշտ է ճանապարհը պայթեցնել մի քանի տեղում:

4. Հակատանկալին արգելք կարող է ծառալել նաև լանջի ուղղորդությունն ավելացնելը (թեքությունը ուղղահայցին մոտեցնելը):

### ԶԱՆԱԶԱՆ ԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՅԹԵՑՈՒՄԸ

Թնդանորը փչացվում է 1—2 կգ. Փ. Պ. նյութով, լիցքը դնելով փակաղակի վրա կամ լցամասի մեջ:

Տանկը, ավտոմոբիլը, արակտորը կամ ինքնաթիռը պայթեցվում են 0,6—0,8 կգ փշտող պայթուցիկ նյութերով, լիցքը դասավորելով մոտորի գլաններում, կամ շարժիչի կարսոր մասերում (մոտորի վրա): Արկերի փշացումը կատարվում է 0,4—0,6 կգ. Փ. Պ. նյութով, պայթուցիկ նյութի քանակը պետք է վերցնել, նայած արկի արամագծին:

Հրաձգություններից հետո մնացած և չպայթած արկերը պայթեցնելու համար, արկերի ընկած տեղում նրանց դրությունը չպետք է փոխել, վորովհետև կարող են միջի լիցքը պայթի, ուստի այդպիսի արկերը պայթեցնելու ժամանակ, անհրաժեշտ է հեռանալ անվտանգ տարածության վրա, վորպեսզի արկի բեկորները չդիպչեն:

## ՊԱՅԹԵՑՄԱՆ ԳՈՐԾԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ

Պայթեցման գործի հետախուզությունը կատարվում է լեռ-  
կու նպատակով:

1. Պարզել այն բոլոր տվյալները, վորոնք անհրաժեշտ են  
պայթեցման աշխատանքների հոմար:

2. Պարզել ֆուգասների և ականների տեղերը, վոր թողնված  
կլինեն հակառակորդի կողմից:

Առաջին գեպքում անհրաժեշտ ե պարզել թե ինչպիսի ա-  
ռարկաներ են պայթեցման յենթակա, և վորոշել նրանց հիմնա-  
կան մասերն ու չափերը, վորոնցով կարելի լի նախորոք կազմել  
բոլոր անհրաժեշտ հաշիվները՝ լիցքեր ու ցանցեր սարքելու  
համար:

Այս պետք ե պարզել, թե այդ առարկաները վորքան են  
քողարկված թշնամու դիտողությունից: Հետախուզությունն այդ  
գեպքում պետք ե կոտարվի հիմնական չափերի և սխեմայի դը-  
րանցման միջոցով:

Յերկրորդ գեպքում, լեռը հետախուզվում են ֆուգասների  
ականների տեղերը, նախքան այդպիսիների տեղերը գտնելը,  
պետք ե լուծել հակառակորդի փոխարեն, թե մենք վորակ կթա-  
ղելինք ականներն ու ֆուգասները, և ըստ այն ել աշխատել ավե-  
լի արագ և զգուշ մոտենալ այդպիսի տեղերին, մանգալ ու գըտ-  
նել: Յեթե ֆուգասը պատրաստված լինի այնպես, վոր պայթի  
թելը կամ ելեմնտը ձգելու միջոցով, այդ գեպքում անհրաժեշտ  
ե սարքել մի յերկաթե ծռած ձող, վորը գետնի վրայով քաշելու  
ժամանակ ղեմ կառնի հաղորդիչին կամ լարին: Դրանից հետո  
պետք ե կարել լարն առանց քաշելու, հետո հաղորդիչի և լարի  
ուղղությամբ գտնել լիցքն ու ելեմնտները:

Լիցքը հալտարերելուց հետո, պետք ե զգուշաբար դուրս հա-  
նել և 25 մետրի վրա լիցքը չեղոքացնել, այնպես վոր պատիճը  
չմասվի, վորով կապահովվի պայթեցման անվտանգությունը: Յե-  
թե հաղորդիչը կամ շնորհը տանում է գեպի արտաքին իիցքը,  
այդ գեպքում առաջին հերթին հանվում ե պատիճը և հետո  
լիցքը:

Յերր հայտաբերվում են հակառանկալին ականներ, ալդ  
գեպքում գտնելով մեկը, պետք ե գտնել նաև մյուսները, տվյալ

տեղից մեկ կամ յերկու մետր շարավիղի տարածության վրա:  
Ականալին դաշտ հայտաբերելով, չեղոքացվում ե ականների շուրջն  
անցնելու համար 6—8 մետր լանությամբ մի շերտ և նշանակ-  
վում ե պայմանական նշաններով: Ականալին դաշտ հայտաբերե-  
լու մասին գրում են մի վորեւ տախտակի վրա հետեւալ մակա-  
գիրը՝ «Զգուշ, ականալին դաշտ ե, անցք կա» և այդ տախտակը  
դրվում ե ականալին դաշտից առաջ 100 մետրի վրա: Դրվում ե  
նաև ուղեցուցներ, ականալին դաշտի շուրջն անցնող ճանապարհը  
ցույց տալու համար:

## ՀԱՅՈՂ ՊԱՅԹՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1. Լիցքը պետք ե շատ կրպ կպցված լինի պայթեցվող  
առարկային:

2. Խանձուին շաշկան պետք ե լինի լիցքի վերեւում, պայ-  
թեցվող առարկայի հակառակ կողմում:

3. Շաշկաները լիցքում պետք ե միմյանց կիպ կպչեն:

4. Խանձերն ու հաղորդիչները նախորոք պետք ե ստուգ-  
ված լինեն:

5. Պայթեցնելուց առաջ անհրաժեշտ ե չափել շղթայի դի-  
մացկունությունը ոմմետրով, վորը ցույց ե տալիս, թե տվյալ  
մեքենան կպայթեցնի, թե վոչ:

## ՆԱԽԱՅՈՂՈՒՇԱՅՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՊԱՅԹԵՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ

Պայթեցման աշխատանք կոտարելու ժամանակ անհրաժեշտ  
ե պահպանել հետեւալ կանոնները:

1. Ամեն մի աշխատանքի համար պետք ե նշանակված լինի  
պատասխանատու անձնավորություն, վորը պետք ե զեկավարի  
պայթեցման բոլոր աշխատանքները:

2. Ամեն մի պայթեցնող պետք ե հաստատ իմանա, թե ինչ  
ե նրան անհրաժեշտ կատարել և ինչ հետեւղականությամբ:

3. Պայթեցման աշխատանքի ժամանակ վոչ մի կողմանի և  
ավելորդ մարդ չպետք ե լինի:

4. Պայթեցման աշխատանքը պետք ե սկսել և դադարեցնել  
միմիայն զեկավարի հրամանով կամ աղղանշանով:

5. Պայթուցիկ նյութերի հետ վարվելիս, պետք ե պահպա-  
նել այն ցուցումները, վորոնք նշված են նախորդ եջերում:

6. Պատրիճները պետք ե հեռու լինեն լիցքերից և Պ. նյութերից. աշխատանքի համար մեկն ու մեկին Պ. նյութերը բաց թողնելիս, պետք ե հանձնել հաշվով նրա դիտողության տակ:

7. Պատրաստի լիցքերը գործածելուց առաջ պահպամ են պատրիճներից և մյուս Պ. նյութերից առանձին, և դրանց պահպանելու համար ժամապահ ե կանգնեցվում:

8. Յերբ հաղորդիչները ցցած պատրաստ են, այն ժամանակ հաղորդիչների ծալրերի և ելեկարականության աղբյուրի (ելեմենտների կամ մեքենալի) մոտ ժամապահ ե կանգնեցվում, վորը լենթարկվում ու կատարում ե պայմանագրացման աշխատանքի դեկավարի կարգադրությունները: Յեթե պայմանագրի մեքենա կա, պտտելու կոթունը պահպամ ե աշխատանքի զեկավարի մոտ:

9. Հաղորդիչների ցանցի ստուգումը կատարվում ե այն ժամանակ, յերբ բոլոր մարդիկ հեռացել են լիցքերի մոտից անվտանգ տարածության վրա:

10. Մինչև աշխատանքի վերջը հաղորդիչների ծալրերը մեկուսացվում են, և վորեւ ելեկարականության աղբյուրին միացնելը խստիվ արգելվում ե:

11. Վորոտի ժամանակ այն հաղորդիչների ծալրերը, վորոնք գալիս են լիցքերից, անհրաժեշտ ե մանրամասնորին մեկուսացնել ռետինե և կպչող ժապավենով: Զի թույլատրվում հաղորդիչների ցանցը դասավորել ռադիոկամանից 200 մետր հեռավորությունից ավելի մոտիք:

12. Յերբ պայմանագումը կատարվում ե հրատար խողովակով, դրանց վառելու համար նշանակվում ե՝ մեկ պայմանողի համար 5 հատից վոչ ավելի, յեթե դրանք միմյանց մոտիկ են գտնվում:

13. Պետք ե հաշվի առնել, թե քանի լիցք ե թաղված և քանիսը պայմանը. իսկ յեթե լիցքը խափանում ավեց, այդ դեպքում կարելի ե մոտենաւ առնվազն 15 րոպեից հետո. դրանից շուրջ մոտենալը վտանգավոր ե:

14. Զապայման ծակած քարի լիցքը դատարկելն արգելվում է, բաց լիցքերը պետք ե պայմանունել յերկրորդ պատիճով:

### ՊԱՅՄԱՆԻՑԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՀՆԵՐՈՎ

1. Պ. Ն. փոխադրության համար նշանակվում են ժամապահներ, վորոնց քանակը կախված է պայմանուցիկ նյութերով բարձած

սալերի քանակից: 8 սալի համար նշանակվում ե 4 ժամապահն և պահակապետ. իսկ յեթե ավելի յե, ամեն 2—3 սալի համար նշանակվում ե մեկ ժամապահ:

2. Տվյալ պահակապետը կամ այն պետը, վորը հատուկ նշանակված ե պայմանուցիկ նյութերի տեղափոխության համար, պատասխանատվություն ե կրում տվյալ գույքի անվտանգ տեղ հասցնելու համար և պարտավոր ե հսկել նաև սալլապահների վրա, վորպեսդի նրանց կողմից պահպանվեն բոլոր նախագուշական միջոցների կանոնները:

3. Մեկ տրանսպորտում 50 սալից և 24 տոննից ավելի Պ. Ն. չպետք ե լինի:

4. Այն արկղները կամ ամանները, վորոնցում տեղավորված են Պ. Ն., պետք ե սալի մեջ միմյանց կիպ դարսած լինեն, դրանց տակ պետք ե խսիր կամ խոռ փոել և վերկից ծածկել բրեգենտով, վորպեսդի պայմանուցիկ նյութերն անձրենից և արելից չփառանան:

5. Յեթե վառող ե տեղափոխվում, անհրաժեշտ վառողի արկղը, բացի վերոհիշալից, փաթաթել նաև խսիրով:

6. Պ. Ն. փոխադրելիս, առաջին սալի վրա կարմիր զրոշակ ե ամրացվում. յեթե 4 սալից ավելի լե վերջին սալին ևս պետք ե դրոշակ ամրացնել:

7. Սալերը պետք ե շարժվեն մեկ ճանապարհով մեկը մլուսի լետենից:

8. Պահակներին թույլ չե տրվում սալերից հեռանալ կամ սալի վրա նստել:

9. Արգելվում ե Պ. Ն.-ի հետ տեղափոխել շուտ բոցավառվող նյութեր. կողմանակի իրեր փոխադրել կարելի լե միայն այն դեպքում, յեթե Պ. Ն.-ը 250 կգ ավելի չե:

10. Շարժման ժամանակ կամ սալի մոտ կանգնած ժամապահներին ու սալլապահնին ծխելը խստիվ արգելվում ե:

11. Պ. Ն. փոխադրելիս, վորքան հնարավոր ե, պետք ե բնակավայրերի շուրջն անցնել առանց բնակավայրը մտնելու. Յեթե այդ հնարավոր չե, ապա անհրաժեշտ ե դիմել տեղական իշխանությանը, վորպեսդի նրանք մինչև արանսպորտն անցնելը փակել տան բնակավայրում գտնվող դարբնոցներն ու արհեստանոցները, վորովհետեւ նրանց կրակը վտանգավոր ե:

12. Վորոտի ժամանակ տրանսպորտը չկանգնեցնել անտառում, առանձին ծառերի տակ, բարձր շենքերի մոտ և մեկ տեղ չկուտակել պայմանուցիկ նյութով բարձած սալլերը:

13. Հանգստի համար պետք ե կանգ առնել բնակավայրերից հեռու և ճանապարհներից առնվազն 100 մետրի վրա:

14. Կրակ վառել կամ ծխել կարելի յեւ սայլերից առնվազն 200 մետրի վրա:

ՊԱՅԹՈՒՑԻԿԻ ՆՅՈՒԹԵՐԸ ԳՐԱՍՏԱՆԵՐՈՎ  
ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Պայթուցիկ նյութերի գրաստներով փոխադրությունը, վորպես կանոն, կատարվում է հատուկ սարքած արկղներում, վորոնք դրսից պատած պիտի լինեն կաշվով կամ բրեզենտով, չեմոդանի նման. այդ արկղները կախվում են համեստից (բեռան թամրից) ձիռ աջ ու ձախ կողմերէց: Ամեն մի արկղ ունի 10 առանձին բներ՝ շաշկաներ տեղավորելու համար: Ամեն մի բնի մեջ տեղավորվում են բրեզենտի պայուսակի մեջ դրված լերեք 400 գրամանոց տոլի մեծ շաշկաներ, իսկ մյուս բների մեջ դասավորվում են կպչող և ռետինի ժապավեններ, հրատար քղեր և այլն: Չեմոդանի դրսի նեղ կողմի վրա կարում են մի զրպան, վորտեղ տեղավորվում ե 20 հատ պատիճ և 12 հատ պատրաստի հրձիգ փողակ: Ընդամենը մեկ բեռան մեջ կլինի 40 պատիճ և 24 հրձիգ փողակ: Բեռան մեջ լինում ե 24 կիլոգրամ Պ. Ն. կամ 60 հատ տոլի մեծ շաշկա: Բեռան վրա դրվում են նաև այլ գործիքներ՝ քանդելու և փչացնելու համար:

2. Պայթեցման բեռը պետք ե անպայման ծածկված լինի բրեզենտով, վորը կպաշտպանի պայթուցիկ նյութն արեից և անձրեց:

3. Յուրաքանչյուր բեռ պետք ե ունենա մի ձիապան, վորը ինքն ել տանու մասի ժամապահի պարտականությունները, պահպաններով պայթուցիկ նյութի հետ վարդելու սահմանված բուլոր կանոնները: Նա անշեղորեն պետք ե կատարի հետեւացը: ա) ամեն մի բեռան վրա պետք ե լինի մի կարմիր դրոշակ, և շարժվելու ժամանակ պետք ե պահպանել 2—3 քայլ հեռավորություն մյուս բեռնից. բ) հանգստի ժամանակ պայթուցիկ նյութերի բեռներն անհրաժեշտ ե ճանապարհից դուրս հանել գ) վորոտի ժամանակ կանգ չառնել բարձր անտառի, նույնական առանձին ծառերի, բարձր շենքերի մոտ և բեռները մ. կ տեղ չկռւտակել. դ) մեծ դադարքի ժամանակ կարելի յեւ բեռներն իջեցնել, միմյանց մոտ դասավորել և նշանակել մեկ ժամապահ. ե) պայ-

թուցիկ բեռն առանց բեռնելու և իջեցնելու համար անհրաժեշտ ե 2—3 հոգի. դ) մինչեւ բեռան իջեցնելը լերեք ձիռ սանձը չը պետք ե ձեռքից բաց թողնել և ձիռն թույլ տալ թավավիկելու. ե) բեռների մոտ չծխել և, յեթե ձիապանը կարիք ե զգում բացուկայելու, այդ կարելի յեւ միշտն գրաստավին արանսպորտի դեկավարի թուլավությամբ. ը) պայթուցիկ նույթը, հատկապես պատիճները լավ և փափռել փաթաթելով, պետք ե իրար մոտիկ կիպ տեղավորել արկղում:

$S_{nL}$	$L$	$d_{nL}^L$	$d_{nL}^R$	$\eta_{L^P L^P L^P L^P}$				
$\frac{S_{nL}}{\text{G}} \frac{L}{\text{G}}$	$\frac{d_{nL}^L}{\text{G}}$	$\frac{d_{nL}^R}{\text{G}}$	$\frac{\eta_{L^P L^P L^P L^P}}{\text{G}}$					
200	000	000	000	000	000	000	000	000
1,00	—	—	—	—	—	—	—	—
1,20	3	5	—	4	8	—	—	—
1,50	—	—	—	6	13	—	—	—
1,60	4	8	—	—	—	—	—	—
2,00	5	10	—	—	—	—	—	—
3,00	8	15	—	—	—	—	—	—
5,00	15	25	—	8	17	—	—	—
10,00	25	50	—	20	42	—	—	—
12,00	30	60	—	40	83	—	—	—
15,00	38	75	—	48	100	—	—	—
20,00	55	100	—	60	125	—	—	—
30,00	75	150	—	80	166	—	—	—
40,00	100	200	—	120	250	—	—	—
60,00	125	250	—	160	333	—	—	—
			30×30×35	200	30×30×30	34	30	33
				200	30×30×30	30	30	37
				250	30×30×35	32	39	40
						32	39	416

ԱԴՅՈՒԱՅԱԿ № 2

Լիցինը փայտե գերանները կամ պյուները պայպւամալ հասելու համար (միշտն  
ամբողքամբ)՝

Արագություն		Առաջակացնելիություն		Առաջակացնելիություն		Արագություն		Առաջակացնելիություն	
Ա. Պ.	Պ. Ա.	Տ. Ա.	Վ. Ա.	Տ. Ա.	Վ. Ա.	Ա. Պ.	Պ. Ա.	Տ. Ա.	Վ. Ա.
20	0,4	1,0	2	40	1	1	1	1	1
25	0,6	1,5	3	60	1	1	1	1	1
30	0,9	2,5	4	90	2	2	2	2	2
35	1,2	3,0	5	120	2	2	2	2	2
40	1,6	4,0	7	160	2	2	2	2	2
45	2,0	5,0	8	200	3	3	3	3	3
50	2,5	6,5	10	250	3	3	3	3	4

Քառակիլունի գերանը պայթեցնելու համար վերցնում են ամեն մի քառակուսի ս.մետրին (ըստ լայնական կտրվացքի) 1 գրամ փշտող Պ. Ն.:

### ԱՂՈՒՄԱԿ № 3

Էլեկտրական մասնագիտությունը համար

Պարզաբանություն		Պահանջման կազմ		Պահանջման սկզբաժինում				Վերականգնում	
Պարզաբանություն	Պահանջման կազմ	Աղիքածակի պահանջման մաս	Աղիքածակի պահանջման մաս	Տարածություն	Տարածություն	Պահանջման մաս	Պահանջման մաս	Վերականգնում	Վերականգնում
0,3	0,6	0,09	20	50	1	40	1	105	
0,5	1	0,15	30	75	1	60	1	150	
1,0	2	0,30	40	100	1	80	1	195	
1,5	3	0,45	50	125	2	100	2	255	
2,0	4	0,60	60	150	2	120	2	300	
3,0	6	0,90	70	175	2	140	2	345	
4,0	8	1,20	80	200	3	160	3	405	
5,0	10	1,50	90	224	3	180	3	450	
10,0	20	3,00	—	—	—	—	—	—	
15,0	30	4,50	—	—	—	—	—	—	

ԶԵՒ ՄԱԿ ԳԹՆԱՎՈՂ ՔԱՐԵՐԸ պայմթեցվում է կինտրոնացրած արտաքին լիցքով, ինչպես ողում, բայց լիցքը պակասեցնելով 2 անգամ, վրովիճեաև վառողը չի հաշվում.

Լիցենզիայի յերկարությունը քերպերը հատկու համար

(Պիբուկսիլինով)

Համար Ն թ	Լայնությունը սահմանի մեջը կը ըստ										
	10	20	30	40	50	60	70	80	90	100	
Պիբուկսիլինով քաշը կը պահպանով											
2	0,24	0,48	0,72	0,96	1,20	1,44	1,68	1,92	2,16	2,40	
2,5	0,48	0,96	1,44	1,92	2,40	2,88	3,60	3,84	4,32	4,80	
3	0,72	1,44	2,16	2,88	3,60	4,32	5,04	5,76	6,48	9,20	
3,5	—	1,92	2,88	3,84	4,80	5,76	6,72	7,68	8,64	9,60	
4,0	—	—	3,60	4,80	6,00	7,20	8,40	9,60	10,80	12,00	
4,5	—	—	4,32	5,76	7,20	8,64	10,08	11,52	12,99	14,40	

Դիտողություն՝ լիցենզիա կարելի յե հաշվել նաև

$$\Phi որմուլայով \quad C = \frac{A^2 \cdot B}{150}$$

Վորտեղ C—լիցենզիա քաշն ե կը, A—յերկաթի թերթի հաստությունն ե և B—թերթի լայնությունը ս.մ.մ մետրով:



ԳԻՒԾ 1 Ա.

Ա  
Տ

Վ. ՄԵԼԻՔՅԱՆ

## ПОДРЫВНОЕ ДЕЛО

Гиз ССР Армении  
Эривань, 1934

«Ազգային գրադարան»  
  
 NL0213670

92. 375

